

ԼՆԱԿԻՆՈՒԹԻԱՆ ՖԻԱՅ ՌԵԿՆ

ՈՐՊԵՍ ըզգօն մըշակ ըզսերմնն բարի
 Ի շայեկան ակօս արկեալ յաշնայնի ,
 Բստ տամկանալ նորուն յերկրիս խոնաւ ծոց
 Ըզբերս ձմերան՝ ամարայնի գանձէ հոծ .
 Լնցականի բարեաց տնտեսն խմաստուն
 Լյսպէս առատ կարօտելոց սփռէ զնոյն ,
 Կենաց սերմանս արկանելով յանդ հարուստ ,
 Լտող հնձոց համբար յերկինս անկորուստ :
 Ըզյորդահոս տես մըրըկածին ըզտարափ ,
 Պարզէ օդոց , ստորացօղել յամբոյ յամբ .
 Թէպէտ երկիր համայն 'ի նոյն ոռոգի ,
 Լյլ աստ ծաղկունս տեսցես և մարդ դալարի ,
 Լնդ խոտ ցամաք , կամ ընդ փթթեն և խամրեալ :
 Յանդաստան կորդ՝ երկնից ո՞ր շահք են տեղալ .
 Բայց չէ վընաս թէ անշնորհաց տաս բարիս ,
 Տէր տեսանէ վերուստ և ոչ մոռացիս .
 Սատնող բարւոյդ քեզ չէ ստգիւտ ո՞վ բարերար ,
 Եւ 'ի կորուստ նորուն կան գութք քո յամայր :
 Լաւութիւնք գանձք են 'ի յերկրի անկորուստ ,
 Կեանց ընդ նոսին , կացցեն ընդ քեզ անփախուստ .
 Լոքա ընկերք են անբաժան 'ի շիրմին ,
 Սահ և դրժոխք կարկեալ սարսեն առ նոսին .
 Կէտ տենչանաց նոքա լիցին քեզ և յոյս .
 Օի մեծազօր թէ և բազմիս 'ի գահոյս ,
 Լքեաշատ թէ և երկինք քեզ հիւսեն
 Դարձս կենաց , դիւր վայելից համօրէն ,
 Թէ և աւուր աւուր զըտցես ըզնոր հեշտ ,
 Եւ ամենայն բոպէքդ՝ անցցեն 'ի զաւեշտ ,
 Լուրքն և ժամքն այն քո ծախին 'ի նանիր ,
 Ի վախճանի մտանես 'ի սուգ առաւիր :
 Տաղտուկք , շրթութք եկեալ ըզքե յելք քոյին
 “ Օուր ջանացեր , ասացեն , զուր 'ի բնաւին ” :
 Լնցէ բոլոր , մանկութիւն , խինդ և վայել
 Յոր փափկացար՝ ժամանակին կուր յանել ,
 Եւ զոր եթող՝ բարձցէ զհեշտիցն այն ըստուեր ,
 Լքք քո ընդ հուպ առցին խաւար 'ի գիշեր :
 Խորշոմերես հին ճակատուդ 'ի պաղպաջ
 Լճ և թախիծ հարցեն կընիքս աննահանջ .
 Լիւրդ անկցին սառամանեօք ծերութեան ,
 Դիւր խոնջելոց փախիցէ քուն հանգըստեան .
 Բեզ խահամբ խորտիկք թուիցին կայծ պատիր
 Ոչ հեշտացիս յուշկապարկացդ 'ի կայթիւ .
 Եւ անդարման մարմնոյդ ծանրեալ ուժաբեկ
 Տառապանօք ձգեսցէ մաշեալ աւուրս հէզ ,

Սինչև կերկեր հնչեցէ զժամ քոյին մահ ,
 Յաւերժութիւն բացցէ զկայանս իւր անմահ .
 Սուացութեան ցօղէն ըզդիդ արտասուք ,
 Ղանայ հողածին մարմին 'ի հողն ապաշուք .
 Սլացեալ հոգւոյն յաստուածայինն 'ի յաղթիւր՝
 Ս պատճառէն իւրմէ խնդրէ զվըճիւնն իւր :

ՏԸ ՓՈՆՓԻՆԵԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՕԳՏԱԿԱՐ ԳԻՏՈՒԹԻՒՆՔ

ՂԻԿԵԼԻ ԴԱՆԻ ԴԵ ԳԻՏՈՒԹԵԱՆՅ ՎՐԱՅ :

ՍԱՐԴՈՒՍ բնութեան յատուկնշա-
 նը գիտութիւն կամ բան սորվիլն ըլլա-
 լով՝ ազգերնուս յառաջագիմութեանը
 համար ստէպ կը յորդորենք գիտու-
 թեանց և կըթուութեան հետեւելու .
 կ'ուզենք երբեմն ալ զանազան գիտու-
 թեանց վրայ տեղեկութիւն տալ, անոնց
 բնութիւնը և օգուտները իմացնել,
 թէ որք աւելի օգտակար է, որին պէտք
 է աւելի հետեւիլ, որն է բուն լաւն և
 ազնիւն, և որն աւելի հիմակուան վի-
 ճակիս համար հարկաւոր է, բայց ոչ այն
 պէս օգտակար և ազնիւ ըստ ինքեան .
 Սիայն առաջուցմէ աս կ'իմացնենք ըն-
 թերցողաց, որ թէ երբեմն մեր դա-
 տաստաններուն մէջ սովորական եղած
 կարծեաց դէմ բաներ գտնեն, իրենք
 աշխատաւորաւորմունքը մէկդի թողուն,
 որպէս զի յայտնի իմացութի թէ որուն է
 իրաւունքը որուն է սխալը :

Լ .

ՊԱՐԴՈՒԹԵԱՆ , և ՂԵԳԱՅԻՆ ՊԱՐԴՈՒԹԵԱՆ :

ՍԻՐԹՈՒԹԵԱՆ համար ամենէն զօրա-
 ւոր միանգամայն և ամենէն զուարճալի
 գիտութիւն՝ Պատմութիւնն է, որով
 ամենէն ալ օգտակար . վասն զի ամէն
 գիտութիւնք կը ցուցնեն ինչ որ մար-
 դէս դուրս է, կամ բարոյական մարդէս՝
 որ է բուն մարդկութիւն, իսկ պատմու-

թիւնը կը ցուցնէ՝ մարդուն հանդիպած
 և հանդիպելու դիպուածները : Սրկրիս
 վրայ 7000 տարուան մէջ մարդկանց
 պատահարները ինչ են, եթէ ոչ մեր
 նման սրտերու և բաղդերու հանդիպած
 բաներ . անանկ որ կրնանք ըսել թէ ա-
 նոնք մեզի ալ հանդիպած են գոնէ երեւա-
 կայութեամբ, վասն զի միայն անոնք
 են որ հեռուէն ալ ըլլայ՝ դեռ մեզի հետ
 մասնակցութիւն մը ունին : Սա թէ որ
 իմաստութեան ծայր սեպուեցաւ ինք-
 զինքը ճանչնալն, “ Սանիր գեթ ”,
 թէ որ ինքզինքը լաւ ճանչնալու համար
 պէտք է իրմէ առջիններն և ժամանակա-
 կիցներն ալ ճանչնալ, պէտք է պատմու-
 թիւն սորվիլ . ուրեմն պատմութիւնն
 է որ կրնայ տալ մեզի կատարեալ իմաս-
 տութիւն, որչափ որ կարելի է մար-
 դուս՝ իմաստուն ըլլալ երկրիս վրայ :
 Սրկրից անսահմանութեան մէջ գլը-
 տրկող գնտերուն չափը քննել, ովկիա-
 նոսի անհուն ծոցը և յորձանքները չա-
 փել, մարդուս միտքը կ'ընդարձակեն և
 աշխարհքս կը մեծցնեն . սակայն ա-
 սոնցմէ մէկն ալ զմարդս մարդ չեն ընել .
 ոչ միտքը կը կշտացնեն, ոչ սիրտը կը
 հանգչեցնեն, մանաւանդ թէ անոնց
 մէջ անանկ խորեր փոսեր կը բանան՝ որ
 ոչ ժամանակ և ոչ մարդկային կարողու-
 թիւն կրնան լեցնել : Սակ պատմու-
 թեան գիտութիւնը այսպէս չէ, պարզ
 է . ասով մարդկութեան սիրտը կը փո-
 րուի ժամանակին խորութեան մէջ, և
 կ'ելլեն ծանօթ և օգտակար նիւթեր,
 վասն զի մեզի նման են . ասոնցմով
 մարդս կրնայ ստոյգ բան մը իմանալ, և
 իմացածն ալ իր վրան է, զինքն ճանչ-
 նալն է . ոյս ճանչնալը իրեն կը սորվե-